



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կողես համայնք, հասցե գ.Կողես Կենտրոնի 1
հեռախոս (093) 21 33 43, Էլ. փոստ Koghes.lori@mta.gov.am

N 54 - 16
09 դեկտեմբերի 2016թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ ԱՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ՝

Ձեզ եմ ներկայացնում Կողես համայնքի ավագանու 22.12.2016թ. թիվ 31 որոշումը
հավիվածով:


Առդիր՝ 1word ֆայլ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


ստորագրություն

ԱՆԵԲՄԻՍՅԱՆ
անուն, ազգանուն
ՄՈՒ ԿՈՂԵՍ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 31





« 22 » դեկտեմբերի 2016 թվականի

**Կողես համայնքի 2016 – 2021 թթ. զարգացման ծրագրի
քննարկման և հաստատման մասին**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համայնքի ղեկավարը ներկայացնում է համայնքի սոց.տնտեսական զարգացման ծրագիրը , որի քննարկման արդյունքում

գյուղական համայնքի ավագանին որոշում է .

1.Հատատել ներկայացված Կողես համայնքի 2016 – 2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը:

<i>Համայնքի ավագանու անդամներ</i>	<i>կողմ</i>	<i>դեմ</i>	<i>ձեռնպահ</i>
Ավետիսյան Արմեն Սիլվեստրի			
Բաբաջանյան Օնիկ Մենժիկի			
Վարդյան Հայկ Գրիգորի			
Պողոսյան Ռադիկ Ալեքսանդրի			
Մամաջանյան Փայլակ Ռաֆիկի			

Համայնքի ղեկավար

/Ա.Ներսիսյան /

2016թ. դեկտեմբերի 22
գ.Կողես



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԿՈՂԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ

2016 – 2021 թթ.

ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.12.2016թ. թիվ 31 ՈՐՈՇՄԱՄԲ

2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի իրավիճակի գնահատում
- Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
- Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի , նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևավորում:
- Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
- Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշներ:

Հավելված 1 – Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը:

Հավելված 2 – Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

ԻՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է , որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Ներկայացվող քառամյա զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Կողես համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԿՈՂԵՍ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Կողես համայնքը հիմնվել է մոտ 1000 տարի առաջ , նախկինում այն բնակեցված է եղել հույներով : Գյուղում և շրջակայքում պահպանվել են քառակող կոթող (XII.), եկեղեցի (XII.), գերեզմաններ խաչքարերով (XII-XIIIդդ.), կամուրջ (XIIIդ.), Տուտիկ իշխանի կառուցած հուշակոթողը (1241թ.):

Կողես համայնքը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքում՝ **հյուսիսային մասում**: Մարզկենտրոնից հեռավորությունը 52 կմ է : Շրջկենտրոնը՝ քաղաք Ստեփանավանը , որից գյուղի հեռավորությունը մոտ 18 կմ է : Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է **1350** մ է, մոտակա երկաթուղուց հեռավորությունը **20** կմ է : Գյուղի վարչական տարածքը 1219,0 հա է , որից բնակելի զանգվածը կազմում է **23** հա: Համայնքի կլիման մեղմ է, բարեխառը: Ձմռանը համեմատաբար տաք է՝ հիմնականում կայուն ձյունածածկով: Հունվարի միջին ջերմաստիճանը - 4.5 է, հուլիսին՝ +20 : Նվազագույն ջերմաստիճանը - 32 է , առավելագույնը՝ +40: Շնորհիվ մեղմ կլիմայի ունի փարթամ բուսականություն: Անտառներում հիմնականում կա կաղնի , լորենի , սոճի , վայրի տանձի , բոխի:

Համայնքի բնակչությունը կազմում է 395 մարդ , որից տղամարդ՝ 203, կին՝ 193: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

- ❖ երեխաներ մինչև 4 տարեկան – **15**
- ❖ դպրոցականներ – **32**
- ❖ բնակչություն 18 – 65 տարեկան - 249
- ❖ թոշակառուներ – **25**
- ❖ հաշմանդամներ - 11

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 240 մարդ:

Գյուղը բաղկացած է 135 ընտանիքից , որոնցից 11 ընդգրկված են և օգտվում են << Փարոս >> ծրագրից:

ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքի կառավարվումն իրականացվում է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու միջոցով, որնք ընտրվում է չորս տարին մեկ : Համայնքապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը`

- ❖ Համայնքի ղեկավարի տեղակալ
- ❖ Աշխատակազմի քարտուղար
- ❖ Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ
- ❖ Աշխատակազմի 1 -ին կարգի մասնագետ
- ❖ Հավաքարար
- ❖ Բանվոր
- ❖ Վարորդ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔ

- ❖ Վարչական շենք - 1
- ❖ Ակումբի շենք - 1
- ❖ Գիշերային լուսավորության համակարգ – 1
- ❖ Բեռնատար 1
- ❖ Ծառայողական մեքենա - 1

Գյուղը ամբողջությամբ գազաֆիկացված է :

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակարանային ֆոնդը բաղկացած է 85 առանձնատներից , որորոնցից 15-ը փայտաշեն են, մյուսները` քարից: Բոլոր տները բնակեցված են և գտնվում են բարվոք վիճակում :

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը – 1219 հա որից՝

- ❖ Վարելահող – 305 հա
- ❖ Խոտարք – 64 հա
- ❖ Արոտ – 375 հա
- ❖ Արդյունաբերական հողեր – 6 հա
- ❖ Անտառային հողեր – 75 հա
- ❖ Բնակելի կառուցապատման հողեր – 23 հա
- ❖ Էներգետիկայի և կապի նշանակության հողեր – 0,2 հա
- ❖ Գերեզմանոցներ – 2 հա
- ❖ Հատուկ պահպանվող հողեր – 3 հա
- ❖ Ջրային հողեր – 0,5 հա
- ❖ Դաշտային ճանապարհներ – 13 կմ
- ❖ Ներհամայնքային ճանապարհ – 5 կմ
- ❖ Գյուղատնտեսական նշանակության հողեր սեփականաշնորհված – 300հա :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղի բնակիչության զբաղվածության հիմնական ուղղություններն են անասնապահությունը, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը:

Համայնքը կազմված է 135 տնտեսություններից , որից 60 – ը զբաղվում են անասնապահությամբ, ըստ որի առկա է խոշոր եղջերավոր անասուններ 172 գլուխ , ոչխար 57 գլուխ , խոզ 80 գլուխ, ձի 4 գլուխ , ճագար 30 գլուխ , թռչուն 781, մեղվաբնակներ 92: Անասնապահությունը հանդիսանում է բնակիչների եկամուտի հիմնական աղբյուրներից մեկը:

Գյուղը միացված է խմելու ջրի ջրամատակարարման, ինչպես նաև ոռոգման կենտրոնական համակարգերին: Ոռոգման համար օգտվում են Լոռու ջրանցքից , ներտնտեսային ոգոգման ցանց չկա , ոռոգումը կատարվում է մարգերով, հողատարածքների 60% -ն ընդհանրապես չի ոռոգվում , ինչը՝ երաշտի դեպքում, հանգեցնում է բերքի բավականին քանակության կորստի: Համայնքի հողերից 300 հա-ն մշակվում է, բազմամյա խոտերի ցանքը կազմում է 60 հա:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում իրականացվում է աղբահանություն: Համայնքի տարածքում տեղադրված են աղբարկղեր, որոնցում հավաքվող աղբը տեղափոխվում է համապատասխան վայր, հստակ գրաֆիկով՝ շաբաթը մեկ անգամ: Տարվա ընթացքում մի քանի անգամ համայնքում իրականացվում են շաբաթօրյակներ՝ որին ներգրավվում են համայնքի բնակչության մեծ մասը՝ կամավոր սկզբունքով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ հիմնական դպրոց ինամյա ծրագրով: Դպրոցի շենքը բարվոք վիճակում է : Դպրոցի անձնակազմը բաղկացած է 19 աշխատողից և ունի 22 աշակերտ:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյուղի մշակույթային կյանքը բաղկացած է ավանդական տոներով , ինչպես նաև մեծ շուքով նշվում է Հայրենական պատերազմի հաղթանակի օրը : Դպրոցի շրջանավարդների պատվին կազմակերպվում են տոնահանդեսներ գյուղի բոլոր բնակիչների մասնակցությամբ: Գյուղն ունի ակումբի շենք , որը վերանորոգումից հետո լիարժեք մշակույթային կենտրոն է ` որտեղ անցկացվում են բոլոր միջոցառումները, կազմակերպում են համերգներ, մանկական թատրոնի այցելություններ: Համայնքում կա նաև ֆուտբոլի և վոլեյբոլի համար նախատեսված մարզահրապարակ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ բուժկետ, բաղկացած երեք սենյակներից: Բուժկետը կահավորված բոլոր անհրաժեշտ պարագաներով : Բուժկետում աշխատում է մեկ բուժքույր , ինչպես նաև աշխատում է մեկ ընտանեկան բժշիկ , որը գալիս է Ագարակ գյուղից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒժԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- ❖ Անկախ գյուղի ոչ հետաքրքիր և ծանր կենցաղային պայմաններով հագեցած առօրյաից՝ բնակիչների ցանկությունը ապրել իրենց հայրենի հողում:
- ❖ Համայնքի բնակիչների աշխատասիրության շնորհիվ չկան անմշակ վարելահողեր
- ❖ Գյուղում հարկերի հավաքագրումը կատարվում է 100% - ով , ինչը նպաստում է բյուջեի կատարմանը և հնարավորինս համայնքի խնդիրների լուծմանը:
- ❖ Բնակչության զգալի մասը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ , որպես երկրորդական եկամուտ դիտվում է մեղվապահությունը, ինչին նպաստում են Լոռվա ալպիական դաշտերի առկայությունը : Լուծված է աշխատունակ բնակչության զբաղվածության հարցը :
- ❖ Հողերի 80% հարավային կողմնադրության են և վարելահողերի 40 % ոռոգման տակ , ինչ նպաստում է բերքատվությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- ❖ Ծնելիության նվազում ` կապված բնակչության պակասի և տնտեսական վիճակից:
- ❖ Ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը
- ❖ Գյուղի ոռոգման ներքին ցանցի խնդիրը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ❖ Աշխատուժի առկայություն
- ❖ Անասնապահության զարգացման հնարավորություն
- ❖ Զբոսաշրջության զարգացում

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կատարել բարեփոխումներ, որոնք միտված են գյուղի բարեկարգմանը և զարգացմանը: Բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային կյանքը: Ստեղծել բնակչության հանգստի պայմաններ:

Բարեփոխումներ`

- ❖ Բերքի պահպանման համար անհրաժեշտ է հակակարկտային կայանների ավելացում
- ❖ Ներհամայնքային ճանապարհների բարելավում
- ❖ Հողագործության և անասնապահության զարգացումը
- ❖ Համայնքի անտառային տարածքների պահպանումն և ավելացում
- ❖ Գյուղի գիշերային լուսավորության ցանցի ավելացում և արդիականացում
- ❖ Վարչական շենքի և ակումբի համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում
- ❖ Համայնքի կենտրոնում պուրակի ստեղծում և բարեկարգում
- ❖ Մշակույթի տան միջանցքի հարմարեցում հանդիսությունների սրահի

ԾՐԱԳԻՐ 1

Բերքի պահպանման համար անհրաժեշտ է հակակարկտային կայանների ավելացում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բերքի պահպանման հարցը շարունակում է մնալ խոցելի: Առկա հակակարկտային կայաններն չեն ընդգրկում համայնքի ողջ տարածքը, որի հետևանքով շարունակում է մեծ լինել կարկուտի հավանականությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1 միավոր հակակարկտային կայանի գործողության շառավիղը 80 հա է , իսկ գինը 5000,0 հազ. դրամ : Կողես համայնքի մշակվող տարածքը 300 հա, ամբողջը պահպանելու համար անհրաժեշտ է 5 միավոր հակակարկտային կայաններ: Հակակարկտային կայանների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ևս երկու միավոր հակակարկտային կայաններ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից որոշակի ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար:

ԾՐԱԳԻՐ 2

Գյուղի գիշերային լուսավորության ցանցի ավելացումը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի գրշերային լուսավորությունը կարևոր է բնակիչների կյանքի, կենցաղի առավել հարմարավետության համար: Ներկայումս լուսավորվում է գյուղի 40% , ինչը կազմում է 30 հատ լուսատու :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիշերային լուսատուների քանակությունը ավելացնելով մինչև 90 հատ գյուղի լուսավորության խնդիրը լուծվում է 100 % -ով , ինչը բնակիչների կյանքի և կենցաղային պայմանների բարելավում է: Իսկ ժամանակակից լուսավորության համակարգի կիրառումը կհանգեցնի էլեկտրոէներգիայի առավել քիչ ծախսի, որի շնորհիվ կխնայվեն զգալի միջոցներ: Ծրագրի իրականացումն արժեքը մոտ 9000,0 դրամ է:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Անհրաժեշտ է կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից համապատասխան ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար:

ԾՐԱԳԻՐ 3

Ներհամայնքային ճանապարհների բարելավում ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության համար մեծ դեր ունի նաև ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը: Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ լինելու պատճառով բնակիչներին պատկանող տրանսպորտային միջոցները՝ այդ թվում գյուղատնտեսական տեխնիկան ավելի հաճախ է վնասվում, ինչն էլ հանգեցում է հավելյալ ֆինանսական ծախսերի:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը կարևոր է բնակիչների կյանքի, կենցաղի առավել հարմարավետության համար: Ծրագրի իրականացումը կնպաստի ներհամայնքային կյանքի որակի բարձրացմանը: Անհրաժեշտ է ներհամայնքային ճանապարհների հարթեցում և խճապատում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից համապատասխան ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 8000,0 հազ. Դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

Մշակույթի տան միջանցքի հարմարեցում հանդիսութ. սրահի

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ներկայացված ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ է համայնքի ֆինանսական միջոցների ճիշտ գնահատումը և կանխատեսումը:

Լոռու մարզի Կողեւ համայնքի եմանուտները և կանխատեսումը

h/h	Եկամտի անվանումը	2016թ. փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1.	Հողի հարկ	3172,0	3141,0	3141,0	3141,0	3141,0	3141,0
2.	Գույքահարկ	672,0	690,0	690,0	690,0	690,0	690,0
3.	Պահուստային հողերի վարձ.	1665,0	1497,0	1497,0	1497,0	1497,0	1497,0
4.	տուրքեր	15,0	15,0	15,0	15,0	15,0	15,0
5.	Ընդամենը սեփական եկամուտներ	5524,0	3846,0	3846,0	3846,0	3846,0	3846,0
7.	Պաշ. Տրանսֆերտներ , դոտացիա	4925,9	4441,4	4441,4	4441,4	4441,4	4441,4
8.	Ընդամենը եկամուտներ	10449,9	8287,4	8287,4	8287,4	8287,4	8287,4

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

h/h	ցուցանիշներ	չափի միավոր	2016թ. փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	համայնքի տարածքը	հա	1219	1219	1219	1219	1219	1219
2	բնակչության թիվը	մարդ	395	398	405	408	415	420
3	ծնունդ	մարդ	5	5	6	7	10	10
4	մահացություն	մարդ	2	2	3	3	4	4
5	աշխ. ռեսուրսներ	մարդ	240	241	241	245	250	260
6	Գործազրկության մակարդակը	տոկոս	5	5	5	5	5	5
7	առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	1	1	1	1	1	1
8	պահուստային հողեր	հա	60	60	60	60	60	60
9	խմելու ջրի ներքանցային երկ.	կմ	3	3	3	3	3	3
10	ներհամայնքային ռոռոֆման ցանցի երկ.	կմ	-	-	-	-	-	-
11	ռոռոքման համակարգի տակ ընկած հողեր	հա	120	120	120	120	120	120
12	ներհամ. ճանապ. երկր.	կմ	5	5	5	5	5	5
13	ոչ բարեկարգ ճանապ. երկ.	կմ	5	4	3	2	2	2
14	բնակ. ֆոնդ	հազ.քմ	11,268	11,268	11,268	11,268	11,268	11,268
15	մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	100	100	100	100	100	100

16	ջրի կորուստ ցանցում	տոկոս	5	5	5	5	5	5
17	աշակերտների թիվը	մարդ	21	24	26	28	30	37
18	երեխաների թիվը	մարդ	42	53	59	61	63	63
19	գյուղապետարանի աշխատակազմի թիվը	մարդ	8	6	6	6	8	8

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

h/h	Արտադրության անվանումը	Քանակը տն
1	ցորեն	500
2	կարտոֆիլ	1500
3	բանջարաբուստանային կուլտուրաներ	3
4	կաթ	130
5	միս	10
6	մեղր	1
7	բուրդ	0.1


h/h	Ցանքատարածություններ	Քանակը հա
1	հացահատիկ	160
2	կարտոֆիլ	80
3	առվույտ	50

h/h	Անասնազլխաքանակ	Քանակը հատ
1	խոշոր եղջերավոր անասուն	213
2	մանր եղջերավոր անասուն	125
3	խոզ	30

4	թռչուն	945
5	մեղվաընտանիք	127
6	ձի	4

h/h	Գյուղատնտեսական մեքենաներ	Քանակը հատ
1	թրթուրավոր տրակտոր	20
2	անվավոր տրակտոր	18
3	խոտհնձիչ	7
4	կցասայլ	4
5	գութան	6
6	կուլտիվատոր	3
7	շարքացան	4

ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ԿՈՂԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

h/h	անվանումը	Քանակը
1	Վարչական շենք	1
2	Ակումբի շենք	1
3	Գիշերային լույսի համակարգ	1
4	Ծառայողական մեքենա	1
5	բեռնատար	3
6	Համակարգիչ	2
7	Լազերային տպիչ	1